

ԳԼԽԱՏԱՆ ԱՎԱՆԴՈՒԹԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(XIX դար – XX դարասկիզբ)

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Հայերը ավանդաբար պատկանել են գութանային երկրագործների տնտեսամշակութային տիպին¹: Երկրագործության գերակա դերը հնարավորություն է տվել հայ բնակչությանը վարելու նստակյաց երկրագործա-այգեգործա-անասնապահական համալիր տնտեսական կյանք և դրանով պայմանավորված՝ հիմնելու մշտական ու կայուն բնակավայրեր ու բնակարաններ, որոնք բնորոշ են եղել համայն հայությանը: Նման տնտեսաձև վարող ժողովրդին հատուկ բնակարանի տիպը վաղնջագույն անցյալից գլխատունն է եղել: Բայց, դրա հետ մեկտեղ, տնտեսության մեջ անասնապահության և հատկապես նրա հեռագնա սարվորային ձևի առկայությունը² թելադրել է նաև սեզոնային բնակավայրերի ու կացարանների գոյությունը: Նշված խմբերից յուրաքանչյուրի ներսում զանազանվել են մի քանի տիպեր և տարբերակներ: Ժողովրդական բնակարան հասկացությունը ներառում է ոչ միայն բնակելի, այլև տնտեսական-արտադրական ու կենցաղային կառույցների ամբողջությունը, որ կարող է լինել ինչպես մի տանիքի ներքո՝ ամբողջական ընդգրկմամբ, այնպես էլ առանձնացված ձևերով:

Գիտական գրականության մեջ հայկական ժողովրդական ավանդական բնակարանի տիպերն առանձնացվում են ըստ տարբեր հատկանիշների. ա) հատակագծի, որ վերաբերում է ոչ միայն բնակելի հատվածին, այլև տնտեսական-արտադրական, կենցաղային կառույցների համադրվածքին, բ) գետնի (մակերևույթի) նկատմամբ համալիրի կապվածության, գ) հարկայնության, դ) ծածկի կառուցվածքային ձևերի, ե) շինանյութի, զ) գործառական նշանակության³: Նախանշված տիպերի անվանումները պայմանական են, և դրանցից ամեն մեկն իր հեր-

¹ Տե՛ս **Левин М. Г., Чебоксаров Н. Н.** Хозяйственно-культурные типы и историко-этнографические области // Советская этнография (այսուհետև՝ ՏՅ), 1955, № 4, **Вардумян Д. С.** Характеристика основных этнографических районов Армении в XIX века, М., 1964:

² Տե՛ս **Мкртумян Ю. И.** Формы скотоводства в Восточной Армении // Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև՝ ՀԱԲ), պրակ 6, Եր., 1974:

³ Տե՛ս **Чебоксаров Н. Н., Чебоксарова Н. П., Чеснов Я. В.** Типы традиционного сельского жилища народов Юго-Восточной, Восточной и Центральной Азии. Введение. Основные принципы типологизации, М., 1979, էջ 6-10:

թին տարբեր ազգագավառներում ունեցել է տեղական անվանումներ:

Գլխատունը, ըստ հետազոտողների, բնակարանի հիմնական և լայն տարածված տիպն է: Անվանումը պայմանավորված է ճարտարապետական հորինվածքով: Տիպը առանձնացվել է «կարևոր հատկանիշների ընդհանրացման և երկրորդականների բացառման ճանապարհով»⁴: Կարևորագույն հատկանիշներից են՝ քառանկյուն, առավելապես հավասարակողմ պլանավորումը և դեպի վեր բարձրացող ու աստիճանաբար նեղացող գերանաշարքերով կառուցված՝ երդիկով՝ ավարտվող գմբեթաձև ծածկը և կենտրոնական օջախ-կրակարանը թոնիրը: «Գլխատուն» անվանումը գիտնականներից ումանց կարծիքով, որքան էլ պայմանական լինի, մատնանշում է հենց նրա հատկանիշներից մեկը՝ գլխով տուն, գմբեթով տուն իմաստը⁵:

Գլխատունը պատմական Հայաստանում, այդ թվում նաև Արևելյան Հայաստանում ներկայացված է եղել երկու հիմնական տիպերով, որոնց առանձնացման հիմքում ընկած են ներքին պլանավորման յուրահատկություններն ու ծածկի ձևերը: Գլխատան բնակարանային համալիրի առաջին տիպին բնորոշ առանձնահատկությունը բնակելի և տնտեսական ու արտադրական շինությունների առանձնացվածությունն է: Այն բնորոշ է եղել Հայաստանի նախալեռնային անտառաշատ, մեղմ կլիմայով օժտված շրջաններին՝ Արևելյան Հայաստանում՝ Արարատյան հովիտ, Լոռի, Տավուշ, Զանգեզուր, Լեռնային Ղարաբաղ, Արևմտյան Հայաստանում՝ Վանա լճի արևելյան և հարավային շրջաններ, Մշո դաշտ: Նշված շրջաններում կլիման չափավոր է, չկա ջերմաստիճանի կտրուկ տատանում, ձմեռային եղանակի տևողությունը անհամեմատ կարճ է, ջեռուցման համար ապահովված էին վառելափայտով:

Առաջին տիպի բնակարանային համալիրը բաղկացած էր հիմնականում հետևյալ բաժանմունքներից՝ սրահ (երեսբաց, էվան), գլխատուն (կենալատուն), հացատուն, մառան, գոմ, երբեմն էլ ունենում էր քաղաքային տիպի հյուրասենյակ, որն ավելի ուշ ժամանակի արդյունք էր:

Գլխատան երկրորդ տիպին բնորոշ էր բնակարանային և տնտեսական ու արտադրական, կենցաղային համալիրների համախմբվածությունը մի տանիքի տակ, ամբողջական կառուցվածքով: Նման համալիրը լավագույնս հարմարեցվել է լեռնային խստագույն բնակլիմայական պայմաններում երկրագործական-անասնապահական տնտեսություն վարելու և մեծ գերդաստաններով բնակվելու սովորության պահանջներին: Այդ համալիրի հիմնական բաժանմունքը քառակուսի, երբեմն էլ ուղղանկյուն հատակագծով բնակարանն է՝ 60-80 քմ, երբեմն էլ ավելի մակերեսով: Սովորաբար այդ համալիրը բաղկացած էր

⁴ **Чеснов Я. В.** О принципах типологии традиционно-бытовой культуры // Проблемы типологии в этнографии, М., 1979, с. 189.

⁵ Տե՛ս **Агабабян Р. Я.** Композиция купольных сооружений Грузии и Армении, Ер., 1950, էջ 35: Տե՛ս նաև **Лисициан С. Д.** Очерки этнографии дореволюционной Армении // Кавказский этнографический сборник (այսուհետև՝ *КЭС*), 1955, № 1, էջ 204:

պարսպապատ բակից կամ **շվաքից** (շքամուտք), բնակելի տնից: Ներփակ այս համալիրի բաժանմունքներից էին նաև մառանը (քոխ, քողտիկ, ձեռատեղ, մթերանոց, քիլար), գոմը (թավլա), գոմի օդան (սաքու, գոմասենյակ), որ ծառայում էր որպես ձմեռային կացարան տղամարդ անասնապահների համար, նաև իբրև հյուրասենյակ, զրուցարան⁶ տղամարդ հյուրերի համար:

Գլխատան այս բնակարանային համալիրը գերակշռել է ջերմաստիճանի կտրուկ տատանումներ ունեցող, ցրտաշունչ սարահարթային և գրեթե անտառազուրկ շրջաններում՝ Արևելյան Հայաստանում՝ Շիրակում, Արագածոտնում, Գեղարքունիքում, նաև Ջավախքում, Արևմտյան Հայաստանում շինարարական կատարյալ հմտությամբ և ճարտարապետական ձևավորմամբ հայտնի գլխատունը Բարձր Հայքում էր:

Պետք է նկատել հայկական գլխատան և եկեղեցու ճարտարապետական՝ կառուցողական-հատակագծային համանմանությունը: Գիտնականները հայկական սրբազան կառույցների ճարտարապետական ոճը բխեցնում են ժողովրդական բնակարանաշինության ավանդներից: Ստեփան Լիսիցյանը գրում է. «Թոնրատան ընդհանուր հատակագիծն ըստ ամենայնի հիշեցնում է եկեղեցու կիսակլոր ելուստը (աբսիդը) կողմնային խորաններով, ընդգծում է գոմի օդայի և բազիլիկի հորինվածքային նմանությունը»⁷: Իսկ ճարտարապետ Կ. Հովհաննիսյանը եկեղեցական կառույցների և ժողովրդական տան փոխառնչակցության վերաբերյալ նշում է. «Գավիթները՝ միջնադարյան հայկական ճարտարապետության այդ բարձրարվեստ նմուշները, կիսաշխարհիկ, կիսապաշտամունքային կառուցվածքներ էին և ծառայում էին բարձրաստիճան անհատների թաղման և հասարակական հավաքույթների համար»⁸: Այսպես, բուն տան հողաթումբ վերնատունն իր փոքր կրակարանով (թոնիր) համապատասխանում է եկեղեցու բեմին, ըստ որում՝ թոնրի շուրջը նաև կնունք ու պսակ է արվել ինչպես եկեղեցում, որով պաշտամունքային արմատներն ընկղմվում են բնապաշտական, հեթանոսական ժամանակների մեջ՝ կապված կրակի սրբագործող ուժի հետ: Հազարաշենի անկյունային մառանները համապատասխանում են տաճարի խորաններին: Գլխատան հողահատակ ներքնատունը, որտեղ համախմբվում էր ընտանեկան համայնքը՝ մեծ գերդաստանը, համապատասխանում է տաճարի դահլիճին, իսկ տան սրահը՝ եկեղեցու գավթին⁹:

Ստորև կներկայացնենք գլխատան տիպերի տարածման շրջան-

⁶ Տե՛ս **Лисициан С. Д.** Крестьянское жилища Высокой Армении // Известия Кавказского историко-археологического института (այսուհետև՝ ИКИАИ), т. IV, Тифлис, 1926:

⁷ Նույն տեղում, էջ 208: Տե՛ս նաև **Կ. Հարությունյան**, Դվինի V-VII դարերի ճարտարապետական հուշարձանները, Եր., 1950, էջ 72-76:

⁸ **Կ. Հովհաննիսյան**, Սանահինի վանքը, Եր., 1999, էջ 6:

⁹ Տե՛ս **Գ. Վարդումյան**, Հայոց ժողովրդական բնակարանը (գլխատուն)՝ սրբարան // Հայոց սրբերը և սրբավայրերը (ակունքները, տիպերը, պաշտամունքը), Եր., 2001, էջ 357-360:

ները Արևելյան Հայաստանում: Նախ ներկայացնենք առաջին տիպի գլխատները ըստ պատմաագագրական շրջանների:

Գլխատունը Սյունիքում: Սյունիքի գլխատան մասին սկզբնաղբյուրները բազմաթիվ են, միայն Մեղրու ցածրադիր շրջանում այն չի գրանցվել¹⁰: Սյունիքում գլխատունը կոչվել է «ղարադամ» և «հացատոն», և, ինչպես վկայում են նյութերը, XIX դ. վերջին այն դեռևս եղել է բնակարանի գերակշռող տիպը¹¹: Այստեղ գլխատան հիմնական բաղկացուցիչ մասերն են բուն տունը (տոն), որն անվանվել է նաև «հացատոն», և դրա առջև գտնվող կողքերից պատերի մեջ առնված, դիմացից՝ սյունաշար, հարթածածկ սրահը կամ էլվանը, որը 2-2,5 մ առաջ էր քաշված բուն շենքից: **Հացատոնը** քառակուսի հատակագծով մի կառույց էր՝ կիսով չափ գետնի մեջ նստած: Երկարությունը և լայնությունը սովորաբար հասնում էին 8-10 և ավելի մետրի: Հացատանը կից էր դարձյալ հարթ ծածկով մառանը (տան օթախ, ներսի օթախ, խորդանոց), որի միակ մուտքը հացատանից էր: Այն ծառայել է նաև որպես առանձնասենյակ նորապսակների համար:

Տները գլխավորապես բակ չունեին և հաճախ պարսպապատված էլ չէին: Որպես բակ ծառայել է ավելի ներքև գետեղված հարևանի տան կտուրը կամ դուրս ցցված ժայռը¹²:

Զանգեզուրի գլխատները, կառուցված լինելով լեռների լանջերին, հիմնականում կիսագետնափոր էին: Ավելի ուշ կառուցվածները, այդ թվում՝ Միսիանի տարածաշրջանինը, որը մեծ մասամբ հարթ ռելիեֆ ուներ՝ վերգետնյա էին: Տունը Ջանգեզուրում ընդարձակ, քառակուսի, երբեմն էլ տեղանքով պայմանավորված՝ ուղղանկյուն հատակագծով սենյակ էր: Պատերը շարվել են անտաշ քարից, իսկ Միսիանի շրջանում՝ բացառապես կավե ցեխից: Յուրօրինակ գմբեթաձև, ջերմամեկուսիչ և անջրանցիկ կավե հաստ շերտով պատված ծածկը միշտ եղել է գերանների զուգահեռ շարվածքով՝ հենվելով կենտրոնում կանգնեցված չորս սյուների և պատերին կպած, անկյուններում և երկուսիցերեք տեղ կանգնեցրած օժանդակ սյուների, սրանց գլուխները միացնող հորիզոնական ձգվող գերանների՝ առորմու վրա, որին տեղացիները անվանում էին հրրորմի:

Գլխատան մեծությունը համեմատական էր սյուների քանակին: Նահապետական այդ տներում են կատարվել հարսանիքները, որոնցում ամբողջ սենյակի պարագծով հարսանեկան շուրջպար էին բռնում: Կա-

¹⁰ Տե՛ս **Лисициан С. Д.** Крестьянское жилище Мегринского района // ИКИАИ, т. VI, Тифлис, 1927, էջ 122:

¹¹ Տե՛ս **Ե. Լալայան**, Միսիան // Ազգագրական հանդես, գ. Գ, Թիֆլիս, 1898, էջ 161-177, **Խույնի** Ջանգեզուր // ԱՀ, գ. Դ, Թիֆլիս, 1898, էջ 32-40; **Ширакуни Н.** Зангезурский уезд Елисаветпольской губернии // «Сборник материалов для изучения местностей и племен Кавказа (այսուհետև՝ ՏՄՈՄՔ), Тифлис, 1904, вып. XXXIV, էջ 191-192: **Ս. Լիսիցյան**, Ջանգեզուրի հայերը, Եր., 1969, էջ 102-114, **Ն. Պապուխյան**, Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Եր., 1972, էջ 55-78:

¹² Տե՛ս **Ս. Լիսիցյան**, Ջանգեզուրի հայերը, էջ 87:

տարելով ննջարանի, խոհանոցի, ճաշասենյակի, հյուրասենյակի, ցերեկային սենյակի, աղոթարանի, մառանի, երբեմն անգամ գոմի ու մարագի, հավաքույթների իրականացման հարկաբաժնի դեր՝ ունեցել է չափազանց պարզ, բնակելի նշանակության կահավորում՝ բաղկացած սակավապետ գյուղացուն անհրաժեշտ մի քանի կտոր կահույքից՝ թախտամահճակալ, ալյուրի, հացահատիկի, ընդեղենի՝ հաճախ երկու մասից բաղկացած, **հուկագ** կոչված փայտե, երբեմն նաև կավե կամ կավով ծեփված **քունդուկ** կոչված քրոցաձև ամբարներ, որոնց մեծության չափով որոշել են մարդկանց ունևորության աստիճանը: Տան անդամները, բացառությամբ մեծերի, քնել են հատակին փռված խսիրների, թաղիքների կամ գորգերի վրա փռված անկողիններում: Գերդաստանի յուրաքանչյուր ընտանիք կամ անդամ ունեցել է իրեն հատկացված տեղը: Մեծ գերդաստանները ունեցել են 6-7 օրորոց: Ուշադրության արժանի են օժիտի քանդակագարդ **դուրծի**-անդուկները: Կահույքի տարրերից են նաև պատամիջյան պահարանները, պատրիան՝ **ծըլքաստեղին**, դռնով կամ անդուռ **դուլարները**, ճրագակալները, հագուստի կախիչները, գդալնոցները, կավե աղամանները, սպասքեղենի ճիպոտահյուս զամբյուղները:

Գիշերը բնակարանը լուսավորվում էր ձեթի կանթեղով կամ կավե ճրագով, որը դրվում էր պատի մեջ այդ նպատակով թողած խորշում կամ փայտե ճրագակալի վրա, իսկ ձմռանը՝ քուրսու վրա. ճրագի մեջ կամ ճարպ էր լինում, կամ ձեթ, կամ էլ սև նավթ: Հետագայում դրանց փոխարինեց նավթի լամպը¹³:

Գլխատունը ջեռուցվում էր օջախի, թոնրի և բուխարու միջոցով: Թոնիրը՝ **թօրէնը**, պարտադիր էր հաց թխելու, կերակուր եփելու և տունը տաքացնելու համար: Սիսիանում մեծ թոնրի կողքին պատրաստվել է նաև ավելի փոքրը, որը ծառայում էր առօրյա կենցաղային անհրաժեշտ կարիքներին: Թոնիրը կավաշեն էր, երբեմն վերևից քարերով եզերված: Թոնիրը օջախի կատարելագործված ձևն է, որը շատ ավելի խորն է՝ մինչև 120-130 սմ, շրջանաձև, դեպի ներքև լայնացող հորիզոնական կտրվածքով: Հատուկ օդանցքը նույնպես կավից էր՝ խողովակաձև և կոչվում էր **սուտդուի ակ**, որն ապահովում էր վառվող կրակն անհրաժեշտ թթվածնով: Թոնրի ներսից օդանցքի բացվածքը կոչվում էր թորակ՝ 30 սմ բարձրությամբ, 20 սմ լայնությամբ: Նշված կրակարանները ուղիղ երդիկի տակ չէին լինում՝ դրանց շուրջը բոլորած մարդկանց, ինչպես և կրակը թափվող անձրևաջրերից կամ փոշուց գերծ պահելու համար¹⁴:

Մրահը համարվում էր արհեստանոցը, որտեղ տեղադրվում էին գորգագործական կամ կտավագործական դագգահը՝ **հալքը**, ջուլիակի **ճլկաֆօր** կոչված դագգահը, ճախարակը՝ **պճրարը** և այլն: Զանգեզուրում բոլոր կանայք դաշտային աշխատանքներից ազատ ժամանակ

¹³ Տե՛ս Ս. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, էջ 104:

¹⁴ Տե՛ս Կյուրսին Գ. Армяне Зангезура (краткий этнографический очерк), Тифлис, 1931, էջ 233, Ե. Լալայան, Միսիան // Աշ, գ. Գ, Թիֆլիս, 1898, էջ 201:

զբաղվել են արհեստագործությամբ¹⁵: Չուլհակությունն ու կտավագործությունը միայն տներում են կատարել¹⁶, իսկ վերոնշյալ գործիքները տեղադրվում էին հացատան լուսավոր, երդիկ-**հուրքի** մոտ կամ սրահում: Ցերեկը սրահում էին առանձնացնում նաև խնամքի ենթակա նորածին կամ հիվանդ անասուններին:

Փարախները, գուները և անասնակերի մարագները նույնպես կառուցվում էին տնից և երբեմն նաև բնակավայրից դուրս: Մարագները, հրդեհից երկյուղելով, մեծ մասամբ կառուցում էին կալերի մոտ: Դրանք պահպանել էին կիսագետնափոր և գետնափոր տան հնագույն ձևերը: Լանջային տեղանքում երեք կողմերով թաղում էին հողի մեջ, թիկունքից բացված լուսամուտից էլ հարող դյուրությամբ լցնում էին ներս: Նման տիպի մարագները լայն տարածում ունեին նաև Արցախում¹⁷:

Մի հանգամանք ևս. ըստ Ստեփան Լիսիցյանի և այլոց դիտարկումների՝ Չանգեզուրի աղբբեջանաբնակ բնակավայրերի տների կառուցողները հիմնականում հայ վարպետներն են եղել, և երկարատև համատեղ կենսակերպով էլ բացատրվում է բնակարանների կառուցվածքային բավականաչափ նմանությունը¹⁸:

Գլխատունը Արցախում: Պատմականորեն և կենցաղամշակութային համալիրների նմանությամբ Չանգեզուրն ու Արցախը համարվել են մեկ պատմաազգագրական շրջան¹⁹: Արցախի բնակարանի բնորոշ տիպը XIX դարում և XX դարի սկզբին նույնպես եղել է **դարադամը**, որն իր կառուցվածքային առանձնահատկություններով նման է Չանգեզուրի «դարադամին»²⁰: Տարբերությունն այն է միայն, որ Արցախի տներում թոնրին փոխարինել է գետներեսյա օջախը, և հետևաբար բացակայել է քուրսին: Այս մասին նշում են Ստ. Լիսիցյանը և Ա. Յակոբսոնը²¹: Մակայն Վ. Կոբիչը, խոսելով XIX դ. Լեռնային Ղարաբաղի հայերի բնակարանի մասին, բաց օջախների հետ մեկտեղ մատնանշում է նաև թոնիրն ու քուրսին²²: Բայց Ղարաբաղում սովորաբար թոնիրը տեղադրվում էր տնից հեռու, առանձին ծածկի տակ՝ իբրև հացատուն, շատ այլ դեպքերում շինված է եղել գլխատանը կից սրահում՝ մուտքի մոտ: Սրահը նույնպես սողումաբաշ ծածկով էր, ունենալով լայն երդիկ՝ ծխի ազատ ելքի համար²³:

¹⁵ Տե՛ս **Շիրակունի Н.**, նշվ. աշխ., էջ 190:

¹⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 103:

¹⁷ Տե՛ս Վ. **Բոդյան**, Հայ ազգագրության համառոտ ուրվագիծ, Եր., 1974, էջ 83:

¹⁸ Տե՛ս Ա. **Լիսիցյան**, Չանգեզուրի հայերը, էջ 112:

¹⁹ Տե՛ս **Вардумян Д.** Характеристика основных этнографических районов Армении в XIX в., М., 1964:

²⁰ Տե՛ս **Давидбеков Н.** Село Гадрут Елисаветпольской губернии Джебраильского уезда // СМОМПК, 1888, **Лисициан С.** К изучению армянских крестьянских жилищ (карабахский карадам) // ИКИАИ, том III, Тифлис, 1925, էջ 91-108, **Кобычев В.** Крестьянское жилище народов Азербайджана в XIX в. // КЭС, 1962, вып. III, էջ 36-40:

²¹ Տե՛ս **Лисициан С.** К изучению армянских крестьянских жилищ (карабахский карадам), էջ 103-104, **Якобсон А.** Очерк истории зодчества Армении в V-XVIII в., М.-Л., 1950, էջ 58-59:

²² Տե՛ս **Кобычев В. П.** Крестьянское жилище народов Азербайджана в XIX в., էջ 38:

²³ Տե՛ս **Лисициан С. Д.** К изучению армянских крестьянских жилищ (карабахский карадам), էջ 100-105:

Մառանը գլխատանը կից, մեծ մասամբ ետին պատի, երբեմն էլ կողքի պատի կողմը, մուտքը գլխատանից, առանց երդիկի, ժայռի կամ հողի մեջ խրված կառույց էր **քհոլ** անվամբ, որ բառացի նշանակում է քարայր՝ ճարտարապետական անունը ցույց տվող անվանում:

Գոմը Արցախում առանց օդայի էր, ներքին ոչ մի կապ չունեք գլխատուն-դարադամի հետ, կառուցվում էր նրանից որոշ հեռավորության վրա, բայց առավել վաղնջական ձևը գլխատան հետ համակառույց էր, մուտքը առանձին՝ սրահից: Վաղ գարնանից մինչև ուշ աշուն սրահում էր կենտրոնանում ամբողջ ընտանիքի առօրյա կյանքը: Այս նկատառումով էլ կողքի պատի մեջ շինվում էր բուխարի՝ կերակուրներ եփելու, ջուր տաքացնելու համար:

Գլխատուն-դարադամը բնակարանային համալիրի հիմնական բաժանմունքն էր: Ցուրտ եղանակները սկսվելիս գլխատունը կենդանանում էր՝ դառնալով ընտանիքի հավաքատեղի, ծառայում էր որպես ընդունարան, խոհանոց, սեղանատուն, ննջարան, մառան: Ինչպես Արցախում, այնպես էլ Հայաստանի մեղմ կլիմայով օժտված հյուսիս-արևելյան անտառաշատ այլ շրջաններում գլխատուն-դարադամը միացած չէր գոմի հետ և չունեք բակ-շվաք, որին այստեղ փոխարինում էր առջևը բաց սրահը: Ի տարբերություն ամեն կողմից փակված ներքին կառույց շվաքի՝ սրահը ունեցել է բնակարանի արտաքին, բացօթյա մասի նշանակություն:

Արցախում գլխատները շատ դեպքերում կիսագետնափոր էին: Կառուցված լինելով բացառապես լեռնային վայրերում՝ իրենց ետին պատով հարում էին սարալանջին, ըստ որում ամբողջ շենքի երեք պատով (ետին և երկու կողքի) գրեթե գետնի մեջ էին և միայն չորրորդ՝ ճակատի պատը բարձրանում էր գետնի մակերեսից: Այս տեսակ կառույցի շնորհիվ ներքևի շենքի կտուրը դառնում էր վերևի տան առջևի բակը:

Ղարադամի առաստաղը տան ներսից ստանում էր գմբեթի, իսկ դրսից լայնանիստ հատած կոնի ձև: Այն ճարտարապետական հետաքրքրություն ներկայացնող կառույց էր: Ծածկածը նույնպես **սողոմաքաշ** (դարնավուզ) էր. քառակուսի ձևով, հենվում էր տան անկյուններում քարե քառակուսի խարիսխների վրա իրենց **սընակլօխ**-խոյակներով կանգնեցված չորս սյուներին՝ ամեն մի պատից 1,5-2 արշին (1 արշ = 0,7 մ) հեռավորությամբ: Դրանց վրա հենված հաստ գերանները կազմում էին չորս պատերին զուգահեռ շրջանակ, որոնց վրա էլ նստում էր գմբեթաձև ծածկը:

Արցախում գոմը թեև անջատ էր **ղարադամ**-գլխատանից, այդուհանդերձ այն հիմնականում կառուցվածքային տեսակետից գլխատան հետ կազմում էր մի ամբողջական համալիր: Նույնը և՛ թոնրատունը:

Գլխատունը Լոռիում: Լոռու պատմաագագրական շրջանի գյուղական բնակարանի նկարագիրը XX դ. սկզբին տվել է Ե. Լալայանը. Լոռու տիպական տունը գլխատունն է²⁴: Տները կիսագետնափոր էին,

²⁴ Տե՛ս Ե. Լալայան, Բորչալուի գավառ, ԱՀ, գ. X, Թիֆլիս, 1903, էջ 206:

քարաշեն և բաղկացած հետևյալ մասերից՝ սրահ, գլխատուն, միջնատուն, թոնրատուն և գու: Ինչպես Չանգեզուրում և Ղարաբաղում, այնպես էլ այստեղ սրահի գործառույթը ամառային տաք եղանակներին ընտանիքի բնակության վայր ծառայելն էր: Սրահը առջևից բաց է եղել, միայն մի քանի սյուներ էին պահում հարթ կտուրը: Սրահի մի պատի մեջ բուխարին էր, կողքին՝ մի լայն, հասարակ թախտ-մահճակալ:

Գլխատունը ծառայում էր իբրև ընդունարան, սեղանատուն, խոհանոց, ննջարան: Գլխատան կենտրոնում գտնվում էր **օրթօջախը**՝ փոքր-ինչ փոսացրած տեղում: Սպասքեղենի, անկողինների, գորգերի, ձնձերի (կարպետ) ծալքատեղ ծառայում էին պատրիհանները (ներսանկվածք) և պատի երկայնքով թարեքները: Պատերից մեկի մոտ դրվում էին հացի փայտե և կավածեփ ամբարները: Միջնատունը կից էր գլխատանը, և դուռն էլ բացվում էր նրա մեջ: Հարթ ծածկով այդ սենյակը այն գործառույթն է կատարել, ինչ տան **օթախը** Չանգեզուրում՝ ծառայելով «նորապսակների համար իբրև ննջարան և շատ անգամ իբրև մթերանոց»²⁵ մառան: Թոնրատունը տնից մի քիչ հեռու էր, ինչպես Ղարաբաղում: Սյուրմաքաշ ծածկով այս շինությունը ուներ մեծ երդիկ (**հերդիկ**), գրեթե կենտրոնում թոնիրն էր՝ իր պարագաներով: Երբեմն գլխատանը կից եղել է գուր: Գումի մի ծայրում օդան էր, ինչպես Ծավկայում և Ջավախքում²⁶: Շրջակա անտառների շնորհիվ այստեղի բնակչությունը ստիպված չէր բնակվել անասունների հետ՝ նրանց տաքությունից օգտվելու համար: Մարագները Լոռիում կառուցվել են տներից հեռու՝ կալերի մոտ: Գումաղբը ոչ թե գործածվում էր իբրև աթար՝ վառելիք, այլ տեղափոխում էին արտերը՝ իբրև պարարտանյութ: Տան առջև լինում էին գետնափոր հորեր՝ տարբեր տեսակի հացահատիկների պահպանության համար:

Լոռիում տարածված էր գլխատան ծածկի երկու տեսակ՝ գերանների անկյունային և գուգահեռ շարվածքներով: Առաջին տիպի ծածկը անվանվել է «սողմաքաշ» և հենվել է առորմու վրա: Երկրորդ տիպի ծածկը կոչվել է «սյուրմաքաշ», որը հենվել է պատերին ու տան մեջտեղը կանգնեցված չորս սյուների վրա²⁷: Երկու դեպքում էլ գմբեթաձև կամ կոնաձև ծածկը ավարտվում էր մի բացվածքով՝ երդիկով: Արտաքուստ կտուրը ծածկվում էր ծղոտով կամ ճահճի ճիլ խոտով, ապա հողի և մոխրի հաստ շերտով:

Գլխատունը Տավուշում: Տավուշ պատմաազգագրական շրջանի ժողովրդական տունը ընդհանրապես չի արտացոլվել ուսումնասիրություններում: Միայն իտալացի ճանապարհորդ Գ. Գերզին, որը 1830-ական թթ. եղել է Տավուշում (Շամշադին), այնտեղի տների մասին գրում է, որ դրանք գետնափոր են, և գյուղը հնարավոր է իմանալ միայն

²⁵ Լույն տեղում, էջ 208:

²⁶ Տե՛ս նույն տեղը:

²⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 207:

տարածության անհարթությունից, որը առաջացնում են կտուրները, և պետք է զգույշ լինել ծխանցքից (երդիկից) ներս չընկնելու համար: Նա նշում է, որ դռնից ներս մտնելով՝ պետք է 12 աստիճան իջնել²⁸: Այդ նույն ժամանակներին վերաբերող ռուսական տիրույթների նկարագրություններում քննարկվող շրջանի բնակարանների վերաբերյալ գրված է, որ դրանք նման են վրացական դարբազիներին, փորված են հողի մեջ և վերնից ծածկված հողե կտուրով, առաստաղը պահելու համար ներսում ամրացված է չորս սյուն, տանիքը կլոր է, օջախը տան ներսում, ծուխը դուրս է գալիս առաստաղի վրա բացված անցքից (երդիկ): Նույն տան մեջ էր նաև հաց թխելու վառարանը: Աղքատ փոքր ընտանիքները տան մեջ պահում են նաև անասուններ, բացի ոչխարներից, որոնց համար գոմերը կառուցվում էին գյուղից հեռու²⁹:

Բավական ընդարձակ այս նկարագրությունը ցույց է տալիս, որ XIX դ. վերջին և XX դ. սկզբին Տավուշում նույնպես տարածված է եղել բնակարանի գլխատան տիպը: Այն անվանվել է տարբեր կերպ՝ «գլխատուն» (Նոյեմբերյան), «կըտրով տուն» (Իջևան), «հողի տուն», «փետով տուն» (Շամշադին, Կրասնոսելսկ): Վերջին երկու անվանումները ինչ-որ չափով մատնանշում են գլխատան բնույթը. դրանք գետնափոր էին, և ավելի շատ փայտանյութ է օգտագործվել, քան մեկ այլ շինանյութ: Իմ հարցումների համաձայն՝ այս տարածաշրջանում գլխատան չափերը հասնում էին 5,6x5,6 մետրից մինչև 8x8 մետրի, մեծ գերդաստանական տներինը՝ 10-12 մ x 10-12 մ չափսերի: Սրանց ծածկը գմբեթավոր էր, աստիճանաբար բարձրացող և փոքրացող քառակուսիներով, որն ավարտվում էր երդիկով: Ըստ հաղորդումների՝ գմբեթը սովորաբար ավելի էր բարձրացվում՝ առատ տեղումների կաթիլքը կանխելու նպատակով:

Առավել տարածված էին կիսագետնափոր գլխատները, որոնց համար որպես պատ ծառայում էր հողաշերտը գետնափոր մասում, իսկ վերգետնյա մասում՝ տեղական քարով շարված պատը, որի բարձրությունը լինում էր 1,5 մետր: Երբեմն գլխատան գետնափոր մասը ունենում էր բարակ, սնամեջ փայտե պատեր, բայց սովորաբար սյուները հիմնվում էին գլխատան չորս անկյուններում, պատերից 80-100 սմ հեռավորության վրա³⁰:

Գլխատան ջեռուցումը իրականացվում էր կենտրոնում տեղադրված օջախի կրակով, որը միաժամանակ ծառայում էր որպես լուսավորության միջոց երեկոյան ժամերին, երբ վառում էր նաև ճրագը, որը դրվում էր ճրագթաթի վրա, օջախից ոչ հեռու³¹:

²⁸ Տե՛ս **Герзи Г.** Развитие шелководства в России // Отечественные записки, СПб., 1839, № 5:

²⁹ Տե՛ս **Обозрение российских владений за Кавказом в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношениях**, ч. 2, СПб., 1836, էջ 232:

³⁰ Տե՛ս **Ռ. Նանասյետյան**, Անձնական գրառումներ (Դաշտային ազգագրական նյութեր, տետր Իջևան-Բերդ, 2000-2015, էջ 15-17):

³¹ Տե՛ս նույն տեղը, էջ 15-18:

Տանը կից էր գետնափոր մառանը՝ մուտքը գլխատնից: Այն գլխատան տիպի էր, գմբեթաձև ծածկով, բայց ավելի փոքր չափսերի, հաճախ առանց երդիկի, քանզի կաթնամթերքի, մրգեղենի, գինու և օղու մթերանոց էր, նաև գործիքներ և հնոտիներ պահելու տեղ:

Նախամուտք-սրահը գլխատունը պաշտպանում էր տեղումներից և քամիներից: Ամռանը այն նաև աշխատանոց էր և ննջարան տան մեծերի համար: Սրահի որևէ անկյունում տեղադրվում էր թոնիբրը, նրա հարևանությամբ՝ թախտ-գահավորակը: Այստեղ կանայք կատարում էին զանազան աշխատանքներ: Ձմռանը կերակրում էին հիվանդ անասուններին, առանձին խնամք տանում, հանգստի պահին կապում էին ձիերը: Սրահում էին ընդունում պատահական հյուրերին և կողմնակի այցելուներին³²:

Գետնափոր կամ կիսագետնափոր գոմը հիմնականում առանձին մուտքով մեկուսի կառույց էր: Մարագը նույնպես գլխատնից հեռու էր ընկած, գոմի հարևանությամբ:

Ամռանը որոշ ժամանակ գոմը ազատ էր մնում և այդ միջոցին այստեղ պահում էին շերամ, որի ցիկլը տևում էր 41-42 օր: Այնուհետև այն նորից զբաղեցնում էին անասունները (երբ վերջանում էին դաշտային աշխատանքները): Ձմեռային սեկյակներով գոմը Տավուշում բնորոշ էր միայն ունևոր ընտանիքներին, քանզի, ինչպես նշել է Ստեփան Լիսիցյանը, անասունների հետ բնակվելու պահանջ չկար: Այստեղ աշխատում էին հնարավորության սահմաններում գոմը բնակարանից հեռու կառուցել:

Բնակարանի, գոմի և մարագի միջև գտնվում էր կալը՝ հարթ պնդացված հատակով շրջանաձև տարածք, որը հնձված հացահատիկի խրձերը չորացնելու և կամով կալսելու համար էր: Այն զբաղեցնում էր 150-200 մ² տարածք:

Կալի կողքին գտնվում էր երեք կողմով գետնափոր, ճակատային կողմով բաց մի կառույց, որը կոչվում էր **կըլապան** (կլապան): Այն կալված ցորենը ժամանակավորապես պահելու, չկալվածը անձրևներից պաշտպանելու համար էր: Կալումը ավարտելուց հետո այստեղ էին կանգնեցնում սայլը, տեղադրում կամը կամ ջարջառը, **չուրը** (արոթ), գութանը: Կանայք այստեղ էին աղում ձավարը, առանձնացնում սերմացուն, աղունը և կատարում այլ աշխատանքներ³³:

Գլխատունը Այրարատում: Այրարատի պատմաագագրական շրջանի հիմնական մասն ընդգրկում է Արարատյան հովիտը, որտեղ գլխատունը բնորոշ չի համարվել և նույնիսկ չի հիշատակվել: Մակայն XIX դ. և XX դ. սկզբներին վերաբերող գրավոր և դաշտային սկզբնաղբյուրների հիման վրա կարելի է եզրակացնել, որ Այրարատում և հենց Արարատյան հովտում էլ գլխատունը բնակարանի բնորոշ տիպ էր:

³² Տե՛ս **Ерицов А.** Экономический быт государственных крестьян Казахского уезда Елисаветпольской губернии // Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, Тифлис, 1886, էջ 218:

³³ Տե՛ս նույն տեղը, էջ 19-20:

Այսպես, XIX դ. կեսերի ռուսական տեղեկագրերում նշվում է, որ Երևանի գավառի գյուղերում բնակարանը մեծ մասամբ կազմված է գետնափորներից, որոնք կոչվում են դարբազիներ և կառուցվում են այնպես, ինչպես մնացած գավառներում³⁴: Ի. Շոպենը Հայկական մարզի գյուղերը ներկայացնում է որպես «հողածածկ փոսերի կուտակումներ: Լավագույն սենյակը ընդունարան գոմն է, որտեղ անասուններ պահելու հետ մեկտեղ ընդունում են նաև հյուրերին: Բնակիչներն ապրում են այնպիսի բաժանմունքում, որտեղ մեջտեղը օջախն էր վառվում, և ծուխը դուրս էր գալիս առաստաղից բացված անցքից, որը միաժամանակ և լուսամուտ է»³⁵: Մարիետա Շահինյանը, 1920-ական թթ. լինելով Արարատյան հովտում, նկարագրել է տները որպես գետնափոր կառույցներ, որոնց ներսում թոնիրներ կան, իսկ առջևից՝ սյունաշար նախարահներ, լույսը թափանցում էր առաստաղի անցքից (երդիկից)³⁶:

Արարատյան հովտում բնակելի համալիրը հայտնի է «տուն», «նստելու տուն», «թոնրատուն» կամ «հացատուն» անուններով: Դրանց մեծություները կախված էր գերդաստանի բազմանդամությունից կամ ունևորության աստիճանից: Ունևոր գերդաստանները թոնրատունը կառուցում էին այնպես, որ նոր և հին սերունդն ամբողջովին կարողանար տեղավորվել:

Արարատյան հովտում բնակարանային համալիրը բաղկացած էր տնից (հացատուն), նրա առջևի սյունաշար սրահից (էյվան, չարդախ), տանը կից գտնվող գոմից (փայա) և նրա ներսում մարդկանց համար առանձնացված բաժնից (միանա), ինչպես նաև մառանից (քողտիկ, խորդանոց), որը նույնպես կցակառուցված է եղել տանը և մուտք է ունեցել կամ սրահից, կամ էլ անմիջապես հացատնից, երբեմն նաև հյուրասենյակից, իսկ երբեմն էլ ունեցել է առանձին մուտք: Գավիթ-էյվանից էր բացվում հացատան գլխավոր դուռը, որ միափեղկ էր, երեք գոտիով: Հացատունը գոմի հետ էր հաղորդակցվում փոքր դռնակով: Այստեղից էին մտնում գոմ՝ դրա դրսի դուռը ներսից փակելու համար: Հացատան ծածկը եռանավ էր. կենտրոնական երկու գերանները պատերից բարձր լինելով՝ կտուրին տալիս էին կլորավուն ձև: Գերաններն իրենց միջին մասերով հանգչում էին խոյակավոր մեկական սյուների վրա: Երդիկը տեղացիք անվանել են **(հ)երթիս**: Բացի դրանից, ծածկից 25-30 սմ ցած թողնվում էր մի լուսամուտ՝ 20x20 սմ մեծությամբ, որի գոգը խիստ թեք էր՝ լույսը ներքև թափանցելու համար: Հացատան պատերի մեջ պատրահան-դուլաբներ էին սարքվում՝ որպես պահարան: Տան կենտրոնում, երդիկի դիմացից կես մետր դեպի արևելք, թոնիրն էր: Մա գերդաստանի ննջարանն էր. միայն ունևոր տներն ունեին թախտ-մահճակալներ, իսկ մյուսները ննջում էին թոնրափին, գետնի վրա փոված

³⁴ St' u «Обозрение российских владений за Кавказом», ч. 4, էջ 276:

³⁵ Шопен И. Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб., 1852, с. 484-485.

³⁶ St' u «Известия», 1926, № 161:

անկողիններում: Քնելիս անկողինները փռվում էին ավագության կարգով: Երիտասարդներին սովորաբար տեղավորում էին ավելի հեռու՝ պատատակերին կամ անկյուններում: Քնողների գլուխներն ուղղվում էին դեպի պատը: Նորապսակների անկողինը գցում էին կամ մարագում, կամ մառանում, կամ էլ հացատան մի անկյունում պատրաստված վարագույրի հետևում՝ մինչև անդրանիկ երեխայի ծնունդը:

Արարատյան հովտի, մասնավորաբար Քանաքեռի ժողովրդական բնակարանի ու օժանդակ կառույցների կապի, դասավորվածության, տնային գույքի և կահույքի ու գործառույթների, կիրառված շինարարական հմտությունների և այլնի վերաբերյալ ուշագրավ աշխատության հեղինակ է Խ. Աբովյանը³⁷: Նրա նկարագրությունը վերաբերում է Քանաքեռի բազմաբաժին շենքին, որն ընդգրկում է թոնրատուն-հացատունը, մառանը, ննջարանները, գոմը, մարագը: Մեկ բաժնով շենքերը բնորոշ էին չքավոր ընտանիքներին: Բազմաբաժին համալիրի ամենակարևոր և բազմագործառույթ բաժինը թոնրատուն-հացատունն էր: Սա բնակելի բաժանմունքն էր և աչքի էր ընկնում իր մեծությամբ, բարձր դիրքով ու գործառույթների բազմազանությամբ. այստեղ է կատարվել գերդաստանի գրեթե ողջ գործունեությունը: Այն ուներ քառանկյուն հատակագիծ և գտնվում էր համալիրի կենտրոնում: Ելումուտը կատարվում էր մի դռնով: Թոնրատունը մյուս բաժանմունքների հետ կապող դռներ չէր ունենում: Սա հիմնական հարկաբաժինն էր: Հացատանը տեղադրված էին մեծ ու փոքր թոնիրները՝ դռնից ոչ հեռու, պաշտպանված բարձր ու երկար կիսապատով, որը կանխում էր ցրտի անմիջական ներս թափանցելը: Ձմռանը թոնրի վրա էր դրվում քուրսի-սեղանը՝ ճաշելու և թոնրի ջերմությունը պահելու ու թոնրի շուրջը տաքանալու համար: Թոնրի շուրջը, խսիրների վրա գորգեր էին գցվում: Խսիրը հյուսում էին եղեգից, որ բերում էին Արարատյան դաշտից: Ընտանիքի անդամները իրենց տեղերն ունեին քուրսու շուրջը՝ ըստ ավագության: Այստեղ անկողինները գցում էին կողք կողքի, հավասար շարքով, ոտքերը ուղղվում էին դեպի քուրսին, հաճախ դրա տակը: Աբովյանի վկայությամբ՝ «կահ-կարասին կարելի է տեսնել միայն այնտեղ և ոչ ուրիշ տեղ: Տան հաստ պատերի մեջ թողնում էին մեծ խորշեր՝ զանազան իրեր դնելու նպատակով: Դրանք ծառայում էին որպես պահարաններ»³⁸:

Արարատյան հովտին հարող Նախիջևանի գավառում, որն աշխարհագրական ու էթնիկական միջավայրով շատ ընդհանրություն ունի առաջինի հետ, Ե. Լալայանը XX դարի սկզբին նույնպես գրանցել է գլխատան գոյությունը³⁹:

Այժմ անդրադառնանք գլխատան երկրորդ տիպին բնորոշ համա-

³⁷ Տե՛ս Խ. Աբովյան, Գյուղական տների կառուցվածքը // Երկեր, հ. 10, Եր., 1961, էջ 59-96:

³⁸ Նույն տեղում, էջ 61-62:

³⁹ Տե՛ս Ե. Լալայան, Նախիջևանի գավառ // ԱՀ, գ. XII, Թիֆլիս, 1904, էջ 109:

լիրներին և տարածվածության պատմաագագրական շրջաններին:

Գլխատունը Շիրակում: Շիրակի գլխատան բնորոշ առանձնահատկությունը մի տանիքի տակ բնակելի մասի և բոլոր օժանդակ տնտեսական կառույցների համախմբումն է: Բնակարանային այս համալիրը բաղկացած էր երեք հիմնական բաժիններից՝ շվաք-բակ, տուն և գոմ: Բոլոր կառույցները հիմնականում վերգետնյա էին և կիսագետնափոր՝ լանջային տեղանքի դեպքում: Պատերի շինանյութը տուֆ քարն էր:

Շվաքը կամ բակը բոլոր կողմերից փակ, հարթ ծածկով նախասենյակն էր, որի միջոցով իրականացվել է փոխադարձ կապը: Ի տարբերություն Արևելյան Հայաստանի հյուսիս-արևելյան մեղմ կլիմայով շրջանների բնակավայրերի մեծ մասի, որտեղ **բակը** հասկացվում էր որպես տան առջևի բաց հարկաբաժին՝ սրահ, լեռնային ցրտաշունչ շրջաններում բակը ընկալում էին ծածկված կառույց՝ միջանցք իմաստով, որը ներտնային մարդատար և անասնատար ուղի էր: Այսպիսի բակերը բազմաբաժին տան համալիրի մեջ ներառելը, շուրջ կես տարի տևող ձմռան պայմաններում երկրագործական, անասնապահական և տնայնագործական տնտեսավարմանը ծառայեցնելուց զատ, ունեին նաև ինքնապաշտպանական նշանակություն: Առհասարակ, այդպիսի մեծ համալիրների դռները լայն ու ցածր էին արվում, որպեսզի բարձրական անասունները ներս ու դուրս անեին և ասպատակիչների ձիերով ներխուժումներից ապահով լինեին: Շվաքի մեջ «բացվում էին» բոլոր բաժինների դռները: Այստեղ ամռանը քնում էին ընտանիքի՝ սար չբարձրացող, հողագործությամբ և տնայնագործությամբ զբաղվող անդամները: Այս բաժնում էին ժամանակավորապես դասավորվում կալված ցորենի պարկերը, գյուղգործիքները և այլն⁴⁰: Շվաքն ուներ փոքրիկ երդիկ, իսկ խորհրդային տարիներին (XX դ. 30-50-ական թթ.)՝ լուսամուտ: Ծածկը հենվում էր շվաքի կենտրոնում՝ սնաքարերի վրա կանգնեցրած սյուների և պատերի վրա: Մա փաստորեն նույնն է, ինչ նախորդ շրջաններում սրահը, միայն թե տեղի խստաշունչ կլիմայի պատճառով ընդունել է փակ տեսք: Եվ հենց Շիրակի որոշ վայրերում բնակարանի այս հատվածը կոչվում էր նաև «օթախ»: Ամառվա շոգ եղանակին քարաշեն, ամեն կողմից փակ ու պաշտպանված այս համալիրի շվաքում էր կենտրոնանում տան առօրյա կյանքը, մի բնորոշ անվանում, որ ցույց է տալիս բնակարանի այդ մասի նշանակությունն ու աղերսը ամառային կիզիչ եղանակին⁴¹:

Բուն գլխատունը (տուն, հացատուն, թնդրատուն) Շիրակում բնակարանային համալիրի ամենակարևոր բաժանմունքն էր, որի մակերեսի մեծությունը կախված էր ընտանիքի մեծությունից: Այն ոչ թե միաբաժին էր, այլ բաժանվում էր երկու մասի, որոնք մեկը մյուսից բարձր

⁴⁰ Տե՛ս **Лисициан С.** Крестьянское жилище Высокой Армении, էջ 58:

⁴¹ Տե՛ս **Խ. Մամուկեյան**, Հին հայկական բնակարանը // Հին Հայաստանի կուլտուրան, հ. 2, էջ 212:

եր 25-40 սմ, և անվանվում էին՝ առաջինը՝ «վերին տուն» կամ «պզտի տուն», մյուսը՝ «ցածի տուն» կամ «մեծ տուն»: Նախասարահից դուռը բացվում էր «ներքին» կամ «ցածի տան» մեջ, որն ավելի մեծ չափսեր ուներ: Վերին տունը մեկ կամ երկու կողքերին առընթեր ունենում էր փոքրիկ դռնակով, հարթ, առանց երդիկի ծածկով մառան՝ **քիլար** տեղական անվամբ: Վերին տանը տեղադրվում էր թոնիրը. այն անվանվում էր նաև **թնդրատուն**, **թնդրօջախ**՝ փաստորեն կատարելով խոհանոցի և սեղանատան դեր: Հաճախ այստեղ, երբեմն էլ ներքին կամ մեծ տանը տեղադրվում էր երկրորդ, բայց փոքր թոնիրը՝ ջուր տաքացնելու և ամենօրյա կերակուրներ պատրաստելու համար:

Անկողինները փռվում էին թոնրի շուրջը, այնպես, որ ննջողների ոտքերը թոնրի կողմը լինեին: Երեխաների անկողինները գցվում էին ծնողների անկողինների մոտ: Ունևոր գերդաստանները թնդրատան մեկ կամ երկու պատերի տակ շինում էին տախտակե անշարժ ու լայն որմնաթախտեր, բնորոշ էր նաև շարժական մեծ թախտերի գործածությունը: Մեծ գերդաստանական տների գլխատան անկյուններում ստեղծվում էին փոքրածավալ սենյակներ (օդա)՝ իբրև ննջարան, յուրաքանչյուր անհատական ընտանիքի համար, սովորույթ, որը բնորոշ էր Բարձր Հայքին:

Թնդրատունը նաև աշխատանոց էր ու կանանց հարկաբաժին:

Ավելի ուշ՝ XIX դարի վերջին և XX դարի սկզբներին, Ալեքսանդրապոլի քաղաքային բնակարանաշինության ավանդների ազդեցությամբ հարևան բնակավայրերում ի հայտ է գալիս հարթ տանիքով և պատուհաններով բնակարանի տիպը՝ դրան կից թնդրատնով, որոնցում բնակվում էին հիմնականում ունևոր ընտանիքները:

Բնակելի հատվածից թոնրի չգոյությամբ վերանում է նաև գմբեթաձև ծածկի անհրաժեշտությունը, որով և ամբողջությամբ փոխվում է տան կառուցվածքային ձևավորումը: Բնակելի այս նոր համալիրների առաջ գալը, վերակառուցումները, ինչ խոսք, պայմանավորված էին նաև հայկական գյուղ նոր հարաբերությունների ներթափանցմամբ:

Վերը նշված ավանդական գլխատանը ճիշտ նման բնակարանային համալիր էր տարածված **Ջավախքի** պատմաազգագրական շրջանում⁴², որն անմիջապես հարում է Շիրակին:

Նույնպիսի բարդ բնակարանային համալիր էր բնորոշ նաև **Գեղարքունիքի** պատմաազգագրական շրջանին: «Մի տանիքի տակ սովորաբար տեղավորվում էին բնակելի և տնտեսական բոլոր կառույցները՝ թնդրտունը, մառանը, գոմը և այլն: Դրանք բոլորն ունեին մի ընդհանուր մուտք, որը փակվում էր ծանր կաղնե դռնով»⁴³: Այդ ընդհանուր մուտքը բացվում էր փակ միջանցքի՝ սրահի մեջ: Տունը կամ հացատունը այս-

⁴² Տե՛ս **Ե. Լալայան**, Ջավախք // ԱՀ, գ. I, Թիֆլիս, 1896, էջ 224-226: Տե՛ս նաև **Григоров К.** Селение Карзах Ахалкалакского уезда Тифлисской губернии // СМОМПК, 1893, вып. XVII, էջ 106:

⁴³ **Тер-Маркаров А.** Село Геозалдара Новобаязетского уезда Эриванской губернии // СМОМПК, 1893, вып. XVIII, с. 106.

տեղ ևս բաղկացած էր երկու բաժնից, որոնցից մեկը՝ թնդրատունը, խահանգի դեր էր կատարում, դրան կից էր մառանը (քիլարը): Գոմը (թավլա) ուներ մարդկանց համար հատուկ բաժին՝ «թավլի օդա»: Տները կառուցվում էին քարից, իսկ ծածկը երկու տեսակի էր՝ գերանների զուգահեռ շարվածքով՝ «ղուբա», և գերանների անկյունային շարվածքով՝ «հազարաշեն»: Ընդ որում, Ստ. Լիսիցյանը նշում է, որ նոր տներում նախապատվությունը տրվում էր առաջին ձևին, որպես ավելի դյուրինի⁴⁴:

Արագածոտնի պատմաազգագրական շրջանի մի զգալի մասին (Թալին, Ապարան), դատելով սկզբնաղբյուրներից, բնորոշ է եղել բարդ համալիրը՝ բաղկացած միմյանց հետ հաղորդակցվող սրահից, գոմից, որում կար օդա, և տնից: Տան առաստաղը պահվում էր չորս սյուների վրա, մեջտեղում էր գտնվում թոնիքը: Տանը կից էր մառանը՝ սրահի միջով բացվող մուտքով⁴⁵:

Այսպիսով, շարադրվածից պարզ է դառնում, որ բնակարանի գլխատան տիպի տարածման արեալը XIX դ. և XX դ. սկզբին Արևելյան Հայաստանում ընդգրկում էր նրա ողջ տարածքը, բացառությամբ Մեղրու շրջանի և Արարատյան հովտի որոշ հատվածների: Բնակարանի այս տիպն էր հիմնականում բնորոշ նաև Արևմտյան Հայաստանի պատմաազգագրական շրջաններին՝ Վասպուրականին, Ծովք-Աղձնիքին, Բարձր Հայքին, Տուրուբերանին, ինչպես վկայում են ազգագրական նյութերը⁴⁶: Հայաստանի պատմաազգագրական բոլոր շրջաններում բնակարանի հիմնական տեսակները իրենց ճարտարապետական կառուցվածքներով հարմարեցված են եղել Հայկական լեռնաշխարհի բնակլիմայական և աշխարհագրական միջավայրին, երկրագործա-անասնապահական համալիր տնտեսավարման եղանակներին ու կենցաղին, երկրի շինարարական նյութերի առկայությանը: Վերը նշված բնակարանային հնագույն համալիրների ճարտարապետական հորինվածքները սկզբնավորվել են Հայկական լեռնաշխարհի բրոնզեդարյան մշակութային ժամանակներից, որին արդեն անդրադարձել ենք այլ հոդվածում⁴⁷:

⁴⁴ Տե՛ս **Лисициан С.** Нор-Байазетский азаршенк и заметки о крестьянских жилищах соседних районов - Памбакского и Даралагязского // ИКИАИ, Тифлис, 1927, т. VI, էջ 133-140:

⁴⁵ Տե՛ս **Халатянц Б.** Поездка в Абаран // Этнографическое обозрение, 1899, № 112, էջ 333-334: Տե՛ս նաև **Լ. Մարգարյան**, Այց Թուրքաց Հայաստանին, Թիֆլիս, 1890, էջ 19-20, **Шагинян М.** Армянская деревня // «Известия», 1926, № 161, 162:

⁴⁶ Տե՛ս **Բենևե**, Բուրլանդիս կամ Հարք գավառ // ԱՀ, գ. Ե., Թիֆլիս, 1899, էջ 43-45: **Ե. Լալայան**, Վասպուրական, գ. XX, Թիֆլիս, 1910, էջ 119-121, **Лисициан С. Д.** Крестьянское жилище Высокой Армении, էջ 55-70: **Ռ. Նահապետյան**, Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը (XIX դ. երկրորդ կես - XX դ. սկիզբ), Պատմաազգագրական ուսումնասիրություն, Եր., 2004, էջ 42-51, **Ս. Մովսիսյան**, Արձակ, ՀԱԲ, պ. 8, Եր., 1978, էջ 37-40, **Գ. Հակոբյան**, Ներքին Բասենի ազգագրությունը և բանահյուսությունը, Եր., 1974, էջ 115-128 և այլն:

⁴⁷ Տե՛ս **Ռ. Նահապետյան**, Հայկական լեռնաշխարհը բնակարանաշինական ավանդների հնագույն կենտրոն // Պատմություն և քաղաքականություն, գիտական հանդես, թիվ 2 (7), Եր., 2020, էջ 96-107:

Բանալի բառեր – գլխատուն, կազարան, թոնիր, երդիկ, օջախ, մատան, գուժ, Արևմտյան Հայաստան, Արևելյան Հայաստան

РАФИК НААПЕТЯН – Традиционные системы расселения в Восточной Армении (XIX – начало XX вв.). – Издревле и до начала XX в. у восточных армян существовали совместные родовые поселения, основанные на трёх принципах. Начальная форма, которая сохранилась исключительно в горных районах, представляла собой систему расселения рода в пределах одного населенного пункта. Она была наиболее характерна для традиционных обществ. При второй системе родственники заселяли целый квартал; она была характерна для сравнительно поздних этапов общественного развития.

До начала минувшего века для армянских поселений было характерно общаться через узкие двери или оконца в стенах, соединяющие жилища представителей одного рода. Третья и наиболее распространенная в XX в. традиция – совместное проживание в смежных квартирах наиболее близких с точки зрения родства семей. Кварталы, заселённые семьями родственников, назывались обычно именами родоначальников. Даже в наши дни еще сохраняются сельские поселения, где кварталы носят родовые имена.

Ключевые слова: род; квартал, заселенный родственниками; населенный пункт; Гюмри; зимовники; смежный квартал; семья; родственные могилы; Берд, Сасун, Зангезур

RAFIK NAHAPETYAN – Traditional System of Settlement of Armenians (XIX century – beginning of XX century). – The article has considered the traditional settlement systems in the Armenian residential areas. Since ancient times up to the beginning of the 20th century, there have been joint clan settlements implemented on the basis of three principles. The initial form, which has been preserved exclusively in the mountainous regions, was a system of the settlement of a clan within one residential area. It was most characteristic of the traditional societies. The second system was a settlement system in which the relatives settled an entire district; it was characteristic of relatively late periods of social development.

Until the beginning of the 20th century, Armenian residential areas have been characterized by the tradition of communicating through narrow doors or windows in the walls connecting the houses of the representatives of a clan. The third and the most widespread tradition in the 20th century was a tradition of cohabitation in the adjacent apartments of the closest brother families in terms of kinship. The districts inhabited by the families of relatives have been known by the names associated with the names of the founders of a clan. Some rural residential areas, where districts bear clan names, have been still preserved even nowadays.

Key words: clan; a district inhabited by relatives; residential area; Gyumri; winter houses; adjacent district; family; graves of relatives; Berd, Sasun, Zangezur